ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ ԵՐԿՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՎ

18.12.2020 15:51

Փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ, որին մասնակցել են ավելի քան վաթսուն փաստաբան:

Ակումբի նիստում ելույթ են ունեցել փաստաբաններ Արա Ջոհրաբյանը, Վահան Հովհաննիսյանը, Էդգար Բաղեմյանը, Մանուշ Եսայանը, Տիգրան Սարգսյանը, Անահիտ Պետրոսյանը, Մելանյա Առուստամյանը, Սիմոն Բաբայանը, Տաթևիկ Բուջատյանը, Գոռ Մարգարյանը, Արմինե Ֆանյանը, Ազատ Շահբազյանը, Վրեժ Խաչիկյանը, Արսեն Համբարձումյանը, Գայանե Ղուլյանը, Հարութ Ակլունցը, Արամ Օրբելյանը, Մարինե Ֆարմանյանը, Հովհաննես Խուդոյանը և Սամվել Ջաղինյանը:

Քննարկման ժամանակ փաստաբաններն ընդգծել են փաստաբանական հանրույթի կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգին խիստ արձագանքելու մոտեցումը: Առաջարկվել է միանալ բողոքի ակցիաներին, այդ թվում դատական նիստերին և դատավարական (քննչական) գործողություններին չմասնակցելու ձևով: Հնչել են նաև կարծիքներ այն մասին, որ ստեղծված իրավիճակը Հայաստանի Հանրապետության համար այնքան օրհասական է, որ պետք է պետական շահի պաշտպանությանը տրվի առավելություն մասնավոր՝ վստահորդի շահի նկատմամբ և հնչեցվել է համոզմունք, որ վստահորդներն առավելապես կհասկանան և կընդունեն այդ մոտեցումը:

Հնչել են նաև կարծիքներ, որ բողոքի ակցիային մասնակցող քաղաքացիներին բերման ենթարկելու և այլ անհետաձգելի դեպքերում, փաստաբանները կարող են բացառություն անել:

Առաջարկվել է նաև փաստաբանների մասնագիտական ունակություններն օգտագործել ռազմական գործողությունների հետ կապված հանցագործությունների բացահայտմանը նպաստելու, ինչպես նաև հայրենիքին օգտակար այլ հարցերով:

Քննարկման արդյունքում ակումբին մասնակցող փաստաբանները որոշել են՝

1. 2020թ. դեկտեմբերի 22-ին ժամը 12:00-ից միանալ Նիկոլ Փաշինյանին անվստահություն հայտնելուն ուղղված բողոքի ակցիաներին, այդ թվում՝ գործադուլին:

2. 2020թ. դեկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին ՀՀ փաստաբանների պալատի գտնվելու վայրից երթով շարժվել դեպի ՀՀ Ազգային ժողով, իսկ այնուհետև՝ ՀՀ գլխավոր դատախազություն՝ հետևյալ փաստաթղթերը փոխանցելու նպատակով՝

ա) ԱԺ նախագահին՝ ռազմական դրությունը վերացնելու և վարչապետին անվստահություն հայտնելու պահանջը.

բ) փաստաբան հանդիսացող պատգամավորներին՝ «Իմ քայլը» խմբակցությունից դուրս գալու հորդորը.

գ) ՀՀ գլխավոր դատախազին՝ հանցագործության մասին հաղորդումը:

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ







Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })